

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի <<Ախլաթյանի միջն. դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Պատմություն>> առարկայի 10 ժամ /վարձատրվող 6 ժամ/, <<Հասարակագիտություն>> առարկայի 1 ժամ /վարձատրվող 1 ժամ/, <<Հայրենագիտություն>> առարկայի 2 ժամ /վարձատրվող 1 ժամ/,

ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /ձև 1/

2. փաստաթուղթ /դիպլոմ/ <<Հանրակրթության մասին >> ՀՀ մասին օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ

3. անձնագրի պատճենը

4. ինքնակենսագրություն /ձև 4/

5. թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջներին բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/

6. մեկ լուսանկար 3x4 չափի

7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ աշխատելու իրավունք

8. ՀՀ արական սեռի քաղաքացիներն ներկայացնում են նաև զինգրքույկ

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 29-ին՝ ժամը 14:00, Սյունիքի մարզի Ախլաթյանի միջն. դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-52-13-12 հեռախոսահամարով: